ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/67-Պ
ծառայությունների վճարովի մատուցման

ք. Երևան

«02» նոյեմբերի 2022 թվական

«Արմադա Կո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ նաև՝ **Կատարող**, ի դեմս տնօրեն Մ. Փիլոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ մի կողմից, և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ նաև՝ Պատվիրատու, ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից,

միասին հիշատակման դեպքում այսուհետ նաև՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ,
կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ նաև՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել սույն Պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ով սահմանված բնութագրին համապատասխան ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել պատշաճ մատուցված ծառայությունների համար՝ սույն Պայմանագրով սահմանված չափով և կարգով:

1.2. Կատարողը պարտավոր է Ծառայությունները մատուցել անձամբ:

1.3. Կատարողը Ծառայությունները մատուցում է սեփական ուժերով, նյութերով և միջոցներով՝ սեփական աշխատակիցների կամ վստահված անձանց միջոցով: Ընդ որում, Կատարողը պատասխանատվություն է կրում ինչպես իր կողմից օգտագործված նյութերի որակի, և միջոցների վստահելիության, այնպես էլ իր և իր աշխատակիցների և վստահված անձանց մասնագիտական պատրաստվածության համար ամբողջ ծավալով:

1.4. Սույն Պայմանագրի առարկա հանդիսացող Ծառայությունները համարվում են Պատվիրատուի կողմից ընդունված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը վավերացնելուց հետո:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. ապահովել ծառայությունների մատուցման շարունակականությունը և անընդհատությունը.

2.1.3. հետևել, որպեսզի Տեղեկատվական միջոցները չվնասվեն, կազմակերպել սույն պայմանագրով նախատեսված գովազդային կրիչների սպասարկումը (մաքրության ապահովումը, լուսավորությունը՝ գիշերվա որոշ ժամերի) սույն պայմանագրի գործողության ողջ ընթացքում:

2.1.4. ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները Տեղեկատվական միջոցների վնասները կանխելու և դրանք պատշաճ տեսքի բերելու համար. գովազդային պաստառի վնասման դեպքում իր ուժերով անհապաղ վերականգնել վնասված գովազդային պաստառը:

2.1.5. Առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության, չկատարել Պատվիրատուի կողմից տրամադրված գովազդի բովանդակությունից շեղում:

2.1.6. Պայմանագրի գործողության ավարտից հետո իր ուժերով ապամոնտաժել տեղադրված գովազդը, ինչի համար Պատվիրատուն որևէ հավելյալ վճարում չի կատարում:

2.1.7. Պայմանագիրը կնքելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ողջ ընթացքում՝ ըստ Պատվիրատուի պահանջի ներկայացնել Պատվիրատուին ՀՀ, քաղաք Երևանում (անհրաժեշտության պարագայում նաև ՀՀ մարզերում) արտաքին գովազդի բիլբորդերների կամ այլ արտաքին գովազդի տեղադրման վայրերի վերաբերյալ Կատարողի ունեցած թույլտվությունները:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. Պայմանագրով նշված ծառայությունները պատշաճ մատուցելու համար Պատվիրատուից պահանջել անհրաժեշտ տեղեկություն՝ համապատասխան կրիչով (գովազդվող նյութ), ողջամիտ ժամկետ առաջ.

2.2.2. Պատվիրատուից պահանջել սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում կատարել վճարում.

2.2.3. Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարում չկատարելու դեպքում դադարեցնել ծառայությունների մատուցումը.

2.2.4. Գովազդման համար տրամադրված նյութը չընդունել և (կամ) չգովազդել, եթե այն իր բնութագրերով կամ որևէ այլ հատկանիշով չի համապատասխանում Պայմանագրի պահանջներին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին. նշված դեպքում Կատարողը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին, ներկայացնելով անհամապատասխանությունները:

2.2.5. իր ստանձնած պարտավորությունների կատարման համար իր հաշվին ներգրավել երրորդ անձանց՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնելու պայմանով:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. Կատարողից պահանջել Պայմանագրով և առանձին պատվերներով (առկայության պարագայում) սահմանված ծառայությունների պատշաճ մատուցում.

2.3.2. ցանկացած ժամանակ իր նախընտրած իրավաչափ ձևով և եղանակով ստուգել մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը, պահանջելով տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը, այդ թվում նաև պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս,

2.3.3. Կատարողից պահանջել վերջինիս կողմից իր պարտականությունների պատշաճ կատարում. սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

2.3.4. Միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը այդ մասին նախապես՝ 10 (տաս) օր առաջ ծանուցելով Կատարողին, 2.3.4.1. Կատարողը թույլ է տվել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտականությունների խախտում, և իր կողմից թույլ տված խախտումը վերացնելու մասին ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում չի վերացրել այն:

2.3.4.2. Կատարողը Պայմանագրով սահմանված ժամկետներում չի մատուցել Ծառայությունները կամ դրանց մի մասը,

2.3.4.3. Կատարողն այլ կերպ թույլ է տվել սույն Պայմանագրի էական խախտում:

2.3.5. այն դեպքերում, երբ Ծառայությունները մատուցվել են Պայմանագրի խախտմամբ կամ այլ թերություններով, Կատարողից պահանջել ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու թերությունները, իսկ ողջամիտ ժամկետում դրանք չվերացնելու դեպքում համաչափորեն նվազեցնելու Ծառայությունների մատուցման համար սահմանված վճարները:

2.4. Պատվիրատուն պարտավոր է՝

2.4.1. չխոչընդոտել Պայմանագրի կատարման հետ կապված Կատարողի իրավաչափ գործողություններին.

2.4.2. Կատարողի պահանջով վերջինիս տրամադրել Պայմանագրով նշված ծառայությունների պատշաճ մատուցման համար անհրաժեշտ տեղեկությունները գովազդի տեղադրումից առնվազն 7 (յոթ) օրացուցային օր առաջ.

2.4.3. Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում կատարել վճարում.

3. ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

3.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և ծավալը, և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը: Ընդ որում, սույն Պայմանագրի շրջանակներում հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի հաստատման օր է համարվում դրանց վրա Կողմերից վերջինի ստորագրության (կնիքի առկայության դեպքում նաև կնքման) օրը:

3.3. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ կամ սույն Պայմանագրի 2.3.4. կետով սահմանված կարգով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

3.4. Այն դեպքում, եթե Պատվիրատուն սույն Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա հանձնման-ընդունման ակտը համարվում է հաստատված Պատվիրատուին ներկայացնելու ամսաթվով:

4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

4.1. Պայմանագրի գինը սահմանվում է 15.720.000 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը:

4.2. Պատվիրատուն մատուցված Ծառայությունների դիմաց վճարումը կատարում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ վճարման ենթակա գումարը Կատարողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.3. Վճարման օր է համարվում Պատվիրատուի հաշվից Պայմանագրի արժեքի ելքագրման օրը: Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կրում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

5.ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Պատվիրատուն երաշխավորում է, որ Պայմանագրով սահմանված Պատվիրատուի կողմից տրամադրվող գովազդման ենթակա գովազդը իր բովանդակությամբ և (կամ) ձևավորմամբ համապատասխանում է դրա նկատմամբ կիրառելի «Գովազդի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ օրենսդրության այլ պահանջներին, և տվյալ գովազդի գովազդումը չի խախտում երրորդ անձանց իրավունքները, ներառյալ բայց չսահմանափակվելով հեղինակային և հարակից իրավունքներով:

5.2. Պատվիրատուն պարտավոր է Կատարողին տրամադրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան գովազդ (գովազդման ենթակա նյութ), իսկ այդ պահանջներին չհամապատասխանող գովազդը (գովազդման ենթակա նյութը) ենթակա է փոխարինման սեղմ ժամանակահատվածում: Կատարողը պատասխանատվություն չի կրում սույն կետով սահմանված պահանջների խախտմամբ պայմանավորված գովազդը (գովազդման ենթակա նյութը) չգովազդելու համար:

5.3. Կատարողը երաշխավորում և հավաստիացնում է, որ տիրապետում է և ունի սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները պատշաճ մատուցելու համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր թույլտվությունները:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Պայմանագրով սահմանված վճարումների ժամկետը խախտելու համար Կատարողն իրավունք ունի Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացնել՝ վճարել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, սկսած կետանցի առաջին օրվանից, բայց ոչ ավել, քան Պայմանագրի ընդհանուր արժեքի 5 (հինգ) տոկոսը

6.3 Պայմանագրով սահմանված Գովազդային ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու համար Պատվիրատուն իրավունք ունի Կատարողին գրավոր պահանջ ներկայացնել՝ վճարել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի ամսական գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, սկսած կետանցի առաջին օրվանից, բայց ոչ ավել, քան Պայմանագրի ընդհանուր արժեքի 5 (հինգ) տոկոսը:

6.4. Պայմանագրով սահմանված բոլոր տույժերը և տուգանքները կարող են կիրառվել տույժեր և (կամ) տուգանքներ պահանջելու իրավունք ունեցող Կողմի հայեցողությամբ: Տույժերը և տուգանքները, որոնք ենթակա են վճարման համաձայն Պայմանագրի դրանք վճարելու պարտավորություն ունեցող Կողմը վճարում է մյուս Կողմից համապատասխան պահանջը ստանալու պահից սկսած 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե Պայմանագրով այլ հատուկ ժամկետ սահմանված չէ:

6.5. Պայմանագրի համաձայն հաշվարկվող տույժերի և տուգանքների վճարումը կամ վնասների հատուցումը կողմերին չի ազատում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումից, այդ թվում՝ փաստացի մատուցված ծառայությունների դիմաց վճարելուց:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Կողմերի միջև Պայմանագրի կատարման շրջանակներում իրականացվող հաղորդակցությունը (գրագրությունը), այդ թվում՝ հանձնման-ընդունման ակտերի մասով, իրականացվում է գրավոր (առձեռն, սուրհանդակի միջոցով, փոստով կամ ֆաքսով), էլեկտրոնային փոստի կամ կողմերի համաձայնությամբ այլ միջոցներով:

7.2. Կողմերի միջև Պայմանագրի կատարման շրջանակներում իրականացվող հաղորդակցությունը (գրագրությունը) իրականացվում է Պայմանագրում նշված հասցեներով: Հասցեների փոփոխության դեպքում Կողմերը պարտավոր են տրամադրել նոր հասցե: Սույն կետում սահմանված պարտավորության խախտման դեպքում պայմանագրի համաձայն կատարված ծանուցումները ուղարկվում են վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված ուղարկման պահից 3-րդ աշխատանքային օրը՝ անկախ հասցեատիրոջ կողմից այն ստանալու փաստից:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների պատշաճ և ամբողջական կատարումը: Ծառայությունները մատուցվում են 2022թ.-ի նոյեմբերի 11-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 11-ը ներառյալ:

8.2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման կապակցությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պարտավորություններ մրցույթի անցկացման հետ կապված՝ Կատարողը պարտավորվում է առանց լրացուցիչ համաձայնություն տրամադրելու այդ բոլոր պարտավորությունները ստանձնել այն նույն ծավալով, որ ծավալով կսահմանվեն Պատվիրատուի համար, պայմանով, որ դրանք լինեն ողջամիտ, չառաջացնեն լրացուցիչ ֆինանսական ծախսեր Կատարողի համար և վերաբերեն սույն Պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորություններին: Լրացուցիչ պարտավորությունների մասին Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին ծանուցել անհապաղ, որոնք ուժի մեջ են մտնում Կատարողի համար դրանց մասին ծանուցվելու պահից, եթե այլ բան չի բխում տվյալ ծանուցումներից:

8.3. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում մինչ այդ պահը եղած պարտավորությունների պատշաճ կատարումից:

8.4. Պայմանագրում յուրաքանչյուր փոփոխություն կատարվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր ձևով,: Պայմանագրով սահմանված հասցեները և բանկային վավերապայմանները կարող են փոփոխվել մի կողմի կողմից մյուս կողմին գրավոր ծանուցելու միջոցով:

8.5. Պայմանագրի ստորագրման օրը Պայմանագրի առարկայի վերաբերյալ ամբողջ նախորդող նամակագրությունը, փաստաթղթերը և բանակցությունները համարվում են ուժը կորցրած:

8.6. Պայմանագրի և դրանով կարգավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը: Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.7. Վեճերը և տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ Պայմանագրի պայմանները կատարելու ընթացքում, հնարավորության դեպքում կլուծվեն բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.8. Պայմանագիրը կազմված և կնքված է հայերեն, երկու հավասարազոր օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Արմադա Կո» ՍՊԸ	**« Հայաստանի հանրային հեռուստաընկերություն » ՓԲԸ**
Հասցե՝ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 34	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ 02659409	ՀՎՀՀ 01540062
«Կոնվերսբանկ» ՓԲԸ	« Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930061524020100	Հ/Հ 2050022082671001
Տնօրեն _____ Մ. Փիլոսյան ստորագրություն և Կ.Տ.	Գործադիր տնօրեն _____ Հ. Մովսիսյան ստորագրություն և Կ.Տ.

«Հավելված 1
«Արմադա Կո» ՍՊԸ և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ միջև 02.11.2022թ.-
ին կնքված
№ ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/67-Պ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի

Աղյուսակ 1

	Ծառայությունների բնութագիրը
Մատուցվող ծառայությունների ծավալը	Կատարողը ք. Երևան, Արշակունյաց-Գրիգոր Լուսավորիչ-Ագաթանգեղոս փողոցների խաչմերուկում տեղադրված թվով երեք LED էկրանների միջոցով տարածում է Պատվիրատուի գովազդը 11.11.2022թ-ից մինչև 11.12.2022թ-ը ներառյալ՝ հետևյալ պայմաններով. • յուրաքանչյուր էկրանի չափը կազմում է 3մ*7մ, մակերես ՝ 21 քմ, ընդհանուր մակերեսը 63 ք.մ. • էկրանների գործողության ժամկետը՝ ժամը 08:00 - 01:00: Աշխատանքային ժամերի ընդհանուր քանակը կազմում է 17 ժամ /1020 րոպե / : Ցուցադրման հաճախականությունը ՝ 15 վ հոլովակ, յուրաքանչյուր 5 րոպեում 1 ցուցադրություն:
	Կատարողը՝ ք. Երևան, Խանջյան – Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում տեղադրված LED էկրանների միջոցով տարածում է Պատվիրատուի գովազդը 11.11.2022թ-ից մինչև 11.12.2022թ-ը ներառյալ՝ հետևյալ պայմաններով. • էկրանների չափը կազմում է 4.5մ*8մ, մակերեսը՝ 36 քմ*2 ընդհանուր 72քմ: Էկրանի գործողության ժամկետը՝ ժամը 08:00 - 23:00: Աշխատանքային ժամերի ընդհանուր քանակը կազմում է 15 ժամ / 900 րոպե / 54.000 վայրկյան: Գովազդային հոլովակի տևողությունը ՝ 15 վ.: Ցուցադրությունը՝ յուրաքանչյուր 5 րոպեում մեկ ցուցադրություն

	Կատարողը՝ ք. Երևան, Նալբանդյան փողոց , “Հանրապետության Հրապարակ” մետրոյի մուտքի մոտ տեղադրված LED էկրանի միջոցով տարածում է Պատվիրատուի գովազդը 11.11.2022թ-ից մինչև 11.12.2022թ-ը ներառյալ՝ հետևյալ պայմաններով. • էկրանի չափը կազմում է 4մ*9մ, մակերեսը՝ 36 քմ: Էկրանի գործողության ժամկետը ՝ժամը 08:00 - 23:00: Աշխատանքային ժամերի ընդհանուր քանակը կազմում է 15 ժամ / 900 րոպե / 54.000 վայրկյան:Գովազդային հոլովակի տևողությունը ՝ 15 վ.: Ցուցադրությունը ՝ յուրաքանչյուր 5 րոպեում մեկ ցուցադրություն
	Կատարողը՝ ք. Երևան, Մաշտոց 17 շենքի տանիքին տեղադրված LED էկրանների միջոցով տարածում է Պատվիրատուի գովազդը 11.11.2022թ-ից մինչև 11.12.2022թ-ը ներառյալ՝ հետևյալ պայմաններով. • էկրանների չափը կազմում է 3մ*7մ, մակերեսը՝ 27 քմ*2 ընդհանուր 54քմ: Էկրանի գործողության ժամկետը ՝ժամը 08:00 - 23:00: Աշխատանքային ժամերի ընդհանուր քանակը կազմում է 15 ժամ / 900 րոպե / 54,000 վայրկյան: • Գովազդային հոլովակի տևողությունը ՝ 15 վ.: Ցուցադրությունը ՝ յուրաքանչյուր 5 րոպեում մեկ ցուցադրություն

	Կատարողը ք. Երևան, Միասնիկյան-Հերացի հատման մասում տեղադրված թվով երկու LED էկրանների միջոցով տարածում է Պատվիրատուի գովազդը 11.11.2022թ-ից մինչև 11.12.2022թ-ը ներառյալ՝ հետևյալ պայմաններով. • յուրաքանչյուր էկրանի չափը կազմում է 3մ*5մ, մակերես ՝ 15 քմ, ընդհանուր մակերեսը 30 ք.մ. • էկրանների գործողության ժամկետը՝ ժամը 08:00 - 23:00: Աշխատանքային ժամերի ընդհանուր քանակը կազմում է 15 ժամ: Ցուցադրման հաճախականությունը ՝ 15 վ հոլովակ, յուրաքանչյուր 5 րոպեում 1 ցուցադրություն:
	Կատարողը՝ ք. Երևան, Հյուսիսային պողոտա 4 հասցեում տեղադրված թվով երկու LED էկրանների միջոցով տարածում է Պատվիրատուի գովազդը 11.11.2022թ-ից մինչև 11.12.2022թ-ը ներառյալ՝ հետևյալ պայմաններով. • էկրանների չափը կազմում է 4մ*9մ,ընդհանուր մակերեսը կազմում է 72քմ: Էկրանի աշխատանքային ժամերը՝ 08:00 - 23:00: Աշխատանքային ժամերի ընդհանուր քանակը կազմում է 15 ժամ/900րոպե/54000 վ. : • Գովազդային հոլովակի տևողությունը՝ 15վ.: Ցուցադրությունը՝ յուրաքանչյուր 5 րոպեում մեկ ցուցադրություն:

Լեդ էկրանների միջոցով մատուցվող ծառայությունների ամսական փաթեթային արժեքը կազմում է 13.560.000 (տասներեք միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ ՝ ներառյալ ԱԱՀ:

Աղյուսակ 2

	Կատարողը՝ Բագրատաշեն մաքսային անցակետի հարակից օղակաձև երթևեկության միջնամասում տեղադրված LED էկրանի միջոցով տարածում է Պատվիրատուի գովազդը 11.11.2022թ-ից մինչև 11.12.2022թ-ը ներառյալ՝ հետևյալ պայմաններով. • էկրանի չափը կազմում է 36քմ (18քմ + 18քմ): Էկրանի գործողության ժամկետը ՝ժամը 24 ժամ: • Գովազդային հոլովակի տևողությունը ՝ 15 վ.: Ցուցադրությունը ՝ յուրաքանչյուր 1 րոպեում մեկ ցուցադրություն

Բագրատաշեն մաքսային անցակետի հարակից օղակաձև երթևեկության միջնամասում տեղադրված LED էկրանի միջոցով մատուցվող ծառայության ամսական արժեքը կազմում է 2.160.000 (երկու միլիոն հարյուր վասուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

ԿԱՏԱՐՈՂ

«Արմադա Կո» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 34
ՀՎՀՀ 02659409
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930061524020100

Տնօրեն՝ _____ Մ. Փիլոսյան
ստորագրություն և Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

« Հայաստանի հանրային հեռուստաընկերություն » ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ 01540062
« Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ /Հ 2050022082671001

Գործադիր տնօրեն՝ _____ Հ. Մովսիսյան
ստորագրություն և Կ.Տ.